

ԲՄԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԻ  
 Պուկարիոյ համար 12 մր  
 սարկիսի 6  
 Արցախի 15  
 համար 8  
 Արցախի համար 8  
 Տարկիսի 1.50

# ՇԱՐՇՈՒՄ



Նուակ և դրամ դրկն  
 հմրագրութեան հաս-  
 յիւն.  
 Редакция на вѣстникъ  
 «Шаржумъ»  
 Варна  
 Redaction du journal  
 «Charjoum»  
 Varna (Bulgarie)  
 Արցախի համար  
 ձեռքի  
 X 20 ՍԱՆԹԻՄ X  
 Պուկարիոյ համար  
 ձեռքի  
 X 15 ՍԱՆԹԻՄ X  
 Գրութիւնք չես տրուի

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
 ԿՐ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

Իւսնուցման տղի առա-  
 ղին երեսին համար 40 ս.  
 հսկ վերջին երեսի հա-  
 մար 20 սանտիմ. երեք հե-  
 աւեղի սանգրանիւրու համար  
 20 ՍՍ զեղը կրչայ :

Վաւանայի համար ձեռքի 10 սանտիմ

«ՇԱՐՇՈՒՄ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԱՆԳԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐԷ

## ԱՆՈՎ ԿՄՊՐԻՄ

Սուր են երկինք սեւաթորմի, ամ-  
 պամած  
 ճիգերը խաւարին մէջ դողա-  
 յար.  
 Գուցէ ասագերն ալ թափուած են  
 գողահար.  
 Անան հիւանդ տերեւներուն պէս  
 դեղնած.  
 Երկինք մըն է գողցես հողիս ալ  
 խաւար  
 Շիճան հոն ալ աստղերն արդէն  
 մթազգած.  
 Եւ երազող իմ նայուածքս երկ-  
 նայած,  
 Կը մարի սեւ ամպերուն մէջ ոգե-  
 լար :

Տրտույմ երկնից խորերուն մէջ կայ  
 սակայն,  
 Աստղի մի շէկ, որ կը վառի փող-  
 փողուն.  
 Ան կը դիտեմ, ազատութեան յոյսն  
 է ան :

Մըթին հոգեւոյ խորչերուն մէջ  
 ալ միայն  
 Անկիւն մը կայ, ճաճանչաւէտ,  
 շողողուն.  
 Անտ՛վ կ'ապրիմ, հայրենիքի սէրն  
 է այն.

ՎԵՏԱ

## ՇԱՏ ՉԻ ԽՈՍՏԱՆԱԼ

Գաղտնական օրգանի մը ը-  
 սածնը միւսնոյն օրգանի կու-  
 սակիցներուն համար շատ ան-  
 դամ ընդունուեր է և կընդունուի  
 իբրեւ պատգամ, որովհետեւ ամ-  
 բոխը հաւատք ունի դէպի այդ  
 պաշտօնական հեղինակութիւնը :  
 Այնպէս վարիչ մարմինը իր  
 հեղինակութիւնը միշտ բարձր  
 պահել, իր խօսքը իբրեւ պատ-  
 դամ ծրուալ բռնելու է շատ զգու-  
 շաւոր դիրք. գործածելու է չա-  
 փաւոր լեզու և շատ խոստանալու  
 չէ : Որովհետեւ երբ ամբողջ ան-  
 դամ մը խաբուի իր վառ յոյսե-  
 բուն մէջ, ալ զգուշար է անոր  
 հաւատ ներշնչել, և այսպիսով  
 կը տուժէ այն գործը, որի շա-

## ՍԻԱԼ ԶԱՍԲԱՅ

«... Համբոյր ձուր վեհ՝ ճա-  
 կատին, որ թողած հայր, մայր,  
 կին, եղբայր, քոյր ամեն ինչ,  
 և քաջուած օտարութեան մէջ,  
 կը պատրաստուի կուռիլ անհա-  
 ւասար ուժի դէմ».— Այս ոգե-  
 ւորուած տղերը կը կարգանք  
 «Հնչակ» վերջի թուին մէջ :  
 Մեր կարծիքով ամեն ինչ ձգե-  
 լով արտասահման քաջուող և  
 հանգիստ կեանք վարող գործիչ-  
 ները, արժանի չեն համբոյրի :  
 Արտասահմանի մէջ չէ կարելի  
 կուռի պատրաստուի : Կուռի  
 պատրաստուելու համար պէտք է  
 գործիչը ճանշնայ ժողովուրդը,  
 անոր ոյժը, գիտնայ անոր տրա-  
 մագրութիւնը, ուսումնասիրած  
 ըլլայ կուռի վայրը, բռնելիք  
 դիրքը, գիտած ըլլայ թշնամու  
 ոյժը, փոխադարձաբար պէտք է  
 ժողովուրդը ճանշնայ կուռի մէջ  
 իրեն առաջնորդողը, որովհետեւ  
 անձնութի մը հեռուէն եկող  
 խօսքերուն չի հաւատար ամբողջ  
 Այս ամեն էական պայմանները  
 լրացնելու համար գործիչը եր-  
 թալու է ոչ թէ արտասահման,  
 այլ հոն, գործի վայրը՝ Հայաս-  
 տան : Կուռը Հայաստանի լեռնե-  
 բուն մէջ պիտի զարնուի և կուռի  
 կարելի է պատրաստուիլ միայն և  
 միայն Հայաստանի մէջ :  
 Ահա՛ յիշատակական գործիչին  
 առջև երկու ճամբայ՝ դէպի ար-  
 տասահման և դէպի Հայաստան :  
 Ամեն ինչ ձգելով առջի ճամ-  
 բով երթալ շատ հեշտ է և դիւ-  
 րին, որու համար մարդու պէտք  
 չէ ունենալ մասնաւոր առաքի-  
 նութիւններ, նոյն իսկ հրապու-  
 ըրիչ է այդ ճամբան, որովհետեւ  
 ո՞վ չի ուզէր «գործիչ» համբաւ  
 վայելել և «համբոյրներ» ստա-  
 նալ, բայց ձրի համբաւ, անար-  
 ժան համբոյրներ :  
 «Իբրեւ համբոյրներ» և պատիւ  
 այն գործիչին սակայն, որ թող-  
 նելով հայր, մայր, կին, եղ-  
 բայր, քոյր, ամեն ինչ՝ կերթալ  
 երկրորդ ճամբով, զի այս ճամ-

բան փշոտ է ու փորձանքներով լի,  
 և որով երթալու համար մարդ  
 պէտք է ունենայ քաղաքացիա-  
 կան արիւթիւն. տղամարդի վա-  
 յել անվեհեր սիրտ, կուռուղի  
 վայել զճակատութիւն և . . . .  
 «Իր ետը ուրացող սէր դէպի  
 գործը»  
 Թերեւս արտասահման քաջուող  
 ունեւ գործիչ՝ մը մեզ նորէն կը  
 կրկնէ, թէ զարգացած և զգա-  
 յուն սրբապաշտի ստիւն համար  
 աւելի դատան է արտասահմանի  
 մէջ գրիչ շարժել, ազատութեան  
 խօսք խօսել, քան մի բաժակ  
 օղիի ալդեցնու թեան տակ կեանք  
 զոհել բուն երկրին մէջ : Այն  
 առարկութիւն, փախուստի ճամ-  
 բայ, իսկու փաստերը եկան ա-  
 պացուցին, թէ ազատ արտա-  
 սահմանի մէջ ապրող պրօպա-  
 գանդիստին այս շարձարուիլը,  
 հիւժուիլը հայ յեզ. գործին հա-  
 մար անպէտ է. անօգուտ և ան-  
 սեղի :  
 Չարգացած մարդը իր թուու-  
 թիւնը քողարկելու համար է, որ  
 այսպէս կը խօսի. իսկ յեզ. գոր-  
 ծի օգուտը զսրբացած գործիչ-  
 ները կը կանչէ դէպի հայրենիք.  
 ուր անոնցմէ մէկը իբրեւ վար-  
 ժապետ, միւսը իբրեւ վարդապետ  
 մէկը իբրեւ բժիշկ, միւսը իբրեւ  
 փաստաբան տանջուող ժողովուր-  
 դի սրտին մէջ պրօպագանդիս-  
 տի, կազմակերպողի և առաջնոր-  
 դողի մեծ դերը կատարելու կոչ-  
 ուած են : Այս երկրորդ ճամբով  
 են գացեր կարիպալտի-  
 ներ, Իպսիլանդիստներ, Պետո-  
 ներ : Իբր զարգացած դասը  
 ընդհանուր առմամբ այս շաւղով  
 չը գնաց, այսինքն անզգայ և  
 անպարտաճանաչ գտնուեցաւ մեծ  
 գործի մը հանդէպ :  
 Դէպի արտասահման սխալ ճամ-  
 բայ է. գործիչները դէպի Հա-  
 յաստան :

Մարգարեանի



ԱԶԳ

Հողաբարձութիւնս իր խորին շնորհակալութիւններ կը յայտնէ ներկայիս ի ստորեւ նշանակեալ բարեւեր անձանց որք հանդուցեալ ծիար Պետրոս Աստարծեանի յուղարկաւորութեան առթիւ Նը ուրիշ բն ի նպաստ վարժարանաց փոխան ծաղկեպատկի :

Տիար Էգնեան լէվարձ 30.—  
 Միհրան Դամոսեան 20.—  
 Սարգիս Գոյումեան 20.—  
 Մ. Ալիախե Գ. Քալիբ 20.—  
 Եւազ 20.—  
 Տ. Սարգեղ Մանուկեան 20.—  
 Ե. Երարբ 20.—  
 Տ. Ե. Աստարծեան և 20.—  
 Կիւրեան 20.—  
 Տ. Եղաբարձ Բանաստեղծեան 20.—  
 Պատանձախ Սոխարծեան Երարց վաճառատան 20.—  
 Տ. Անդամք Ազգ. գործաց կարգադիր մանուկամբ 10.—  
 Տ. Ս. Մէնզիլճեան և ընկ. 10.—  
 Եղբարք Սէթեան 10.—  
 Մէրճիմէկեան 12.—  
 Զորապետ Կարթոֆ 5.—  
 Ե. Սալոբ Աղամեան 5.—  
 Սաչիկ Թազուորեան 5.—  
 Սըրբար Թոմասեան 5.—

Գումար 280—

Ի գլխաց Հողաբարձութեան Ազգ. Գրկ. վարժարանաց Առնապարտ Առնապետ Գ. Պէլլախեան Ծօք. Պ. Օրմանեան Գաւապետ Երուանդ Քիւրումեան 29 Մայիս 1904 Փիլիպե.

գաղաութեան եւ ոճիրին նախադուր եղաք ձե՛ղի որ ձեր ձեռքով ձեր արկնակիցներէն թողնուողին ձերանկերպով մէջ ձգեցիք ձեզի՛ որ մօլորեալ կոնքով զիս այս նկուզին արժանացիք եւ երջանիկ եմ այս ժանգոտեան անո՛ր րենբուռն մէջ զխանարով որ արդարեւ թիւնք չըթեայած է զիս և միթէ անոնցմով կարելի է ետ կեցիք ինձ նպատակէս ... Արեւնոտ թղթեր իր ամբողջ ճիւղալիսն աւարտեցիք իմ երջանկութեանս չը կրնար հաւատարիլ ու այս շղթաներու շառքը լոկ անպագայ արշաւուսին մեղիներն են որ կուզան կէզիքսանս ակամեղներու :

Տոնքիս շառքիս շառքիս Պրոքնիկ Նայրենայէր Այտուի եւ այժմեան սիրացու Աւօֆ շահթերն է ինձ որ շուր կը սլանային յուզուած քրտէն

Մի քանի ամիսներ անած էր իր բանաստեղծութեան վրայ, բայց ինք կարծելով թէ զարեւր անցան, եւ անկէն արդէն մոռցաւ այս քան շուտ կը սկսէր զանտութեամբ ուրիշն, նախախնամութեան անարգութեան եւ ուայտուհեան կրնակիւն արժիւթի չը զօր անդհուր թեամբ մը կարծես, անց կայի եւ ապագայի խօլ անըջանքներուն մէջ, եւ ... ինչեք չէր երազեմ ... բանակալութիւնը խորտակուած արիւնտուշտ մարգասպաններուն սուրբը փչրուած ... ստրկութեան հետքն իսկ անհետացած ... եւ հիմա անհետեւեք կը տիւրեք ար-

ՀԱՆԳՆԱԿՈՒԹԻՒՆ

Անմուռանալի Պետրոս Աէրէմճեանի աշխատութիւններու հրատարակութեան համար Սօֆիայի «Մէտայի» խմբէն ստացանք 21 լէֆ. ուրիշ նախորդ 235 լէֆ 30 սանթիմի հետ այդ նպատակի համար խմբագրութեանն քով կը գտնուի ընդամենը 256 լէֆ 30 սանթիմ :

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՒՆԻԿ

Վառնայի մէջ պ. Նախան Ամիրխանեանց, որ Կերմանիա աւարած է երամշուութիւնը և արդէն Վառնայի թէ օտար և թէ հայ հասարակութեան յայտնի է իբրև ճարտար դաշնակահար ու երամիշտ, այս օրերս յանձն առած է հայ երիտասարդներէ երգեցիկ խումբ մը կազմել :

Յաջողութիւն կը մաղթենք պարոնին իր ձեռնարկած գեղեցիկ գործին մէջ :

— ՅՅի չափ երիտասարդ ու պատանիներ արդէն համաձայնութիւն յայտնած են մասնակցելու և փորձերը սկսած են :

— Իարիզի այս տարուան երկու սալոններուն մէջ հայ արուեստագէտներէն մասնակցած են պ. պ. Եսէրն, Եսպանեան, Զարբեան, անալին անգամ ըլլալով սայտնի մէջ կը ցուցադրեն պ. պ. Ս. Գիւրքեան, Ս. Բէկեան, և Օր. Պապայեան :

— «Անահիտ» մէջ Արշակ Զօպանեան «Արդի հայերէնը» վերնագրով յօդուած մը ունի, ուր ռուսահայ գրական լեզուին հիմքը թիֆլիսի բառարանը կը հռչակէ :

Կը սխալի պ. գրագէտը. Ռուսահայ գրական լեզուն ստեղծուած է արարածեան լուրսառէն, որը դեռ այն ժամանակ կենդանի և քայքայ բառաբառ մըն էր ու պահած էր հայ լեզուին գեղեցկութիւնը և հնչունները :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նգիպտոսի խտիֆը քանի մը օրէն Պոլիս պիտի գայ Սուլթանին բողոքելու թուրք իշխանութեանց կողմէն թասու կղզին գրաւելու համար :

Կղզին խտիֆէն մասնաւոր ստացուած քը կը համարուի և եթէ անմիջապէս բաւարարութիւն չտանայ հաւանական է որ Անգլիա պաշտպան հանդիսանայ :

— Պոլսէն «Թան» կը շեռագրեն որ Թարապուլի մէջ կացութիւնը շատ վտանգաւոր է, նահանգապետը վախճալով որ ապստամբութիւն պայթի հրահանքներ խնդրած է :

— Պոլսոյ մէջ լուր տարածուած է որ Թուսփա Գումակոսի բունտին մէջ յանկարծամահ եղբէր է :

— Կը լուրի ինչ Մակեդոնիոյ մէջ սպաննուած է Մակեդոնացի հին հրոսակապետ Տօնչօ :

Պ Ո Ւ Կ Ա Ր Ւ Ա

Յարը շառ սիրով ընդունած է պուլկար իշխանը և պատուիրակութիւնը. Ոկրունքով ընդունած է Ալէքսանդր Բի արձանի բացման հանդէսին ներկա ըլլալու հրաւերը և հաւանական է որ էր տեղը մեծ դուքսերէն մին շրկէ :

— «Տնէֆիք» թերթը կը հաղորդէ որ իշխանը Բեթերսպուրկի պուլկար գործակատարին լիազօր դեսպանութեան պաշտօնը տուել է : Լիազօր դեսպաններ կրնան ունենալ միայն բոլորովին անկախ պետութիւնները :

— Նախարարապետ Պ. Տանէֆ Բեթերսպուրկէն արդէն մեկնեց է : Թերթերը կը հաղորդեն որ Պ. Տանէֆ Բարիզ գացեր է փոխառութեան խնդիրը վերջնականապէս կարգադրելու համար :

Ռ Ո Ւ Ս Ւ Ա

Ռուսական պատերազմական գաղանիքները ծախող զնդապետ Կրիմ դատապարտուած է 12 ամս բուռն ատժանակէր աշխատութեան :

Ֆ Ր Ա Ն Ա Ա

Երեսփոխանական ժողովին առաջին նիստին մէջ երեսփոխան Մ. Սրմպա հարցուցած է թէ նոր վարչութիւնը Սուլթանի հանդէպ ի՞նչ գիրք պիտի բռնէ Հայ յոյ վերաբերմամբ :

